Ղարաբաղը՝ նյու վասյուկի

Ղարաբաղն առաջիկա երեք տարիների ընթացքում կդառնա էլեկտրաէներգիա արտահանող երկիր: Այս մասին երեկ ԼՂՀ կառավարության նիստի ժամանակ խոսել է ԼՂՀ կառավարության աշխատակազմի արտադրական ենթակառուցվածքների վարչության պետ Վալերի Բալայանը: ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի նախընտրական ծրագրում տեղ գտած այս նախագծի շրջանակներում նախատեսվում է կառուցել, ընդհանուր առմամբ՝ 24-25 հիդրոէլեկտրակայան, որոնցից 5-ը կկառուցվի հենց առաջին փուլում: Դրանցից 3-ը կկառուցվի Թրղե գետի ջրատարի վրա, իսկ 2-ը՝ Թարթառ գետի վրա՝ Մատաղիս գյուղի շրջակայքում:

Վ. Բալայանի խոսքերով, նշված ՀԷԿ-երի էլեկտաէներգիայով հնարավոր կլինի ապահովել հանրապետությունում առկա պահանջների 90 տոկոսը, իսկ երկրորդ փուլում արդեն հնարավոր կլինի նաեւ էլեկտրաէներգիա արտահանել հանրապետությունից: ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանի խոսքերով, ծրագիրը կիրականացվի ինչպես պետական բյուջեի միջոցների, այնպես էլ տեղական, դրսի ներդրողների եւ առեւտրային բանկերի ռեսուրսների հաշվին: Վարչապետը ենթադրում է, որ այս նախագծի իրականացումը ոչ միայն կէժանացնի էլեկտրաէներգիան Ղարաբաղում, այլ նաեւ թույլ կտա շրջանցել գազի գնաճի հետ կապված պրոբլեմները:

Գործադիրը հավանություն տվեց նաեւ «Արցախ ՀԷԿ» ՓԲԸ-ն վերակազմակերպելու մասին որոշմանը, ըստ որի՝ ընկերությունը կդառնա բաց բաժնետիրական, իսկ ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման եւ մի շարք լիազորությունները կվերապահվեն ԼՂՀ կառավարության աշխատակազմին: Վարչապետի խոսքով՝ հստակ նպատակ է դրված՝ «Արցախ ՀԷԿ»-ում ներդրումներ ապահովել թե դրսից, թե ներսից: Բաժնեմասերը կառաջարկվեն շատ ցածր գներով, դրանք մատչելի կլինեն անգամ թոշակառուներին: Խնդիր կա՝ հանրապետական նշանակության այդ օբյեկտի լիարժեք գործարկման ու կառավարման գործում ներգրավել շատ անհատների եւ ապահովել ՀԷԿ-ի շահութաբերությունը՝ ընդգծել է Ա. Հարությունյանը: Բաժնետոմսերի հսկիչ փաթեթը կմնա պետության ձեռքին: Հանրապետության էներգետիկ բոլոր ծրագրերը կյանքի կկոչվեն «Արցախ ՀԷԿ»-ի միջոցով: Ընկերության ընդհանուր շուկայական արժեքը գնահատված է 5,6 մլրդ. դրամ: